



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<20> հունիսի 2011թ.

N 242

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2011-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1756-Ն
ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2011-2014
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի
ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի «ա» ենթակետով, 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի
Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի հունիսի 28-ի N 43 կարգադրությամբ
ստեղծված մոնիտորինգի և գնահատման խմբի ներկայացրած Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011
թվականի տարեկան աշխատանքային պլանի առաջին կիսամյակի մոնիտորինգի և գնահատման
հաշվետվությունը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի
30-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-
տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1756-Ն որոշմամբ
հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2011-2014 թվականների
սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011 թվականի տարեկան աշխատանքային պլանի
առաջին կիսամյակի մոնիտորինգի և գնահատման միջանկյալ հաշվետվությունը՝ համաձայն
հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին
(Փ.Կարապետյան)՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների
իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Արձանագրություն

ՀՀ Արմավիրի մարզային զարգացման հանձնաժողովի նիստի

20.07.2011թ.

Նախագահությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի

ՕՐԱԿԱՐԳ՝

ՀՀ Արմավիրի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011 թվականի տարեկան աշխատանքային պլանի առաջին կիսամյակի մոնիտորինգի և գնահատման միջանկյալ հաշվետվության քննարկում և հաստատում:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

ՀՀ Արմավիրի մարզային զարգացման հանձնաժողովը:

Մոնիտորինգի և գնահատման խումբը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանը

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ տիկին Լ.Մուրադյանը

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար տիկին Փ.Կարապետյանը

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Լ.Մուշեղյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հավանություն տալ ՀՀ Արմավիրի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011 թվականի տարեկան աշխատանքային պլանի 1-ին կիսամյակի մոնիտորինգի և գնահատման միջանկյալ հաշվետվությանը և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարության քննարկմանը:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ